ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-955-29.04.2021-ՖՎ-012/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական – վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է ֆինանսատնտեսագիտական – սոցիալական փորձաքննության:

Ստոր– ներկայացվում է Նախագծի վերաբերյալ տեղեկանքը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԱՌՆԻԿ ԱԹԱՆԵՍՅԱՆ

12.05.2021թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ

(փաստաթղթային կոդ՝ Կ-955-29.04.2021-ՖՎ-012/0)

ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի – «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Համաձայն հաշվետվության՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1.560.6 մլրդ. դրամ, ծախսերը՝ 1.894.6 մլրդ. դրամ, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 333.9 մլրդ. դրամ:

Սույն Հաշվետվության առումով հատկանշական կարելի է համարել հետ–յալ տեղեկություններն ու միտումները:

1. 2020 թվականի փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ հաշվետու տարում, պայմանավորված COVID 19 համավարակով – սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողություններով, մակրոտնտեսական ցուցանիշները զգալի անկում են գրանցել: Մասնավորապես, 2020 թվականին գրանցվել է 7.6 տոկոս տնտեսական անկում՝ կանխատեսված 4.9 տոկոս աճի փոխարեն (տես աղյուսակ 1-ը): Ի դեպ, նշենք, որ համաշխարհային տնտեսության անկումը 2020 թվականին կազմել է 3.3 տոկոս՝ կանխատեսված 3.4 տոկոս աճի դիմաց:

Աղյուսակ 1.

Տնտեսական աճի դինամիկան 2008-2020 թվականներին[1]

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Տտեսական աճ %	6.8	-14.4	2.1	4.6	7.2	3.5	3.4	3.0	0.2	7.5	5.2	7.6	-7.6
Դրամի հաշվարկային փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի հաշվով	305.9	363.3	373.6	372.5	401.7	409.6	415.9	477.9	480.5	482.7	483	480.4	489

Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ի տվյալներից, 2020 թվականին Հանրապետությունում գրանցվել է 7.6 տոկոսի չափով տնտեսական անկում, ինչը 15.2 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից – գերազանցում է համաշխարհային տնտեսության անկման միջին ցուցանիշը գրեթե 2.5 անգամ:

2.Հաշվետու տարում արձանագրված տնտեսական անկումը պայմանավորված է եղել տնտեսության բոլոր ճյուղերի՝ ծառայությունների (5.3 տոկոսային կետ), գյուղատնտեսության (0.5 տոկոսային կետ), շինարարության (0.4 տոկոսային կետ) – արդյունաբերության (0.3 տոկոսային կետ) համապատասխանաբար 10.1, 4.0, 6.6 – 1.5 տոկոս անկմամբ (տես աղյուսակ 2-ը):

[1] Սույն տեղեկանքում օգտագործված 2008-2012 թվականների տվյալները վերցված են Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013-ից, 2013-2017 թվականների տվյալները՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2018-ից, 2018 թվականի տվյալները՝ 2018 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունից և Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-դեկտեմբերին հրապարակումից, ինչպես նաև Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2018 հրապարակումից:

Աղյուսակ 2.

Տնտեսության ճյուղերի նպաստումը տնտեսական աճին (անկմանը) 2008-2020 թվականներին

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
ՀՆԱ	6.8	-14.4	2.1	4.6	7.2	3.5	3.4	3.0	0.2	7.5	5.2	7.6	-7.6
Արդյունաբերություն	0.4	-1.0	1.4	2.3	1.0	0.8	0.0	1.0	0.8	1.8	0.7	1.9	-0.3
Գյուղատնտեսություն	0.3	0.1	-2.6	2.4	1.9	1.6	1.5	2.1	-1.0	-0.6	-1.3	-0.5	-0.5
Շինարարություն	1.8	-11.4	0.5	-2.1	0.1	-1.5	-0.4	-0.4	-1.0	0.2	0.1	0.3	-0.4
Ծառայություններ	3.0	0.3	1.8	1.5	3.2	2.3	2.2	0.8	1.9	5.1	4.7	5.2	-5.3

3. 2020 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է 10.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել տնօրինվող եկամտի կրճատմամբ – տնտեսությունում եղած անորոշություններով: Ընդ որում, պետական սպառումն աճել է 15.6 %-ով, իսկ մասնավոր սպառումը նվազել է 14.1%-ով:

Հաշվետու տարում կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ նվազել են 8.6%-ով: 2020 թվականին ապրանքների – ծառայությունների արտահանման իրական ծավալները նվազել են 31.4%-ով, իսկ ներմուծումը՝ 32.1%-ով:

4. 2020 թվականին սպառողական շուկայում արձանագրված 3.7% 12-ամսյա գնաճն առավելապես պայմանավորված է եղել ՀՀ դրամի արժեզրկմամբ – միջազգային գների աճով: Միջին գնաճը կազմել է 1.2%, որին առավելապես նպաստել է «Սննդամթերք – ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 0.3% գների աճը (դրական նպաստումը գնաճին՝ 0.1 տոկոսային կետ): «Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ» խմբում արձանագրվել է 9.9% գնաճ (դրական նպաստումը գնաճին՝ 0.4 տոկոսային կետ), իսկ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է 1.4% գնաճ (դրական նպաստումը գնաճին՝ 0.5 տոկոսային կետ):

5. 2020 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատությամբ բարելավվել է – կազմել ՀՆԱ-ի 3.1%-ը: Դրամական փոխանցումները տարվա արդյունքներով նվազել են 9.1%-ով: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2020 թվականի արդյունքներով կազմել է 7103.8 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 13.2%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման –

ներմուծման ծավալների անկում. արտահանումը նվազել է 3.9%-ով՝ կազմելով 2544.4 մլն. ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 17.7%-ով – կազմել է 4559.4 մլն. ԱՄՆ դոլար:

Ներմուծման 17.7% նվազման 10.2 տոկոսային կետը պայմանավորված է եղել «Վերգետնյա, օդային – ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի կրճատմամբ՝ 74.4%: Ներմուծման կրճատմանը զգալի նպաստել են «Թանկարժեք – կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ – դրանցից իրեր», «Հանքահումքային արտադրանք» – «Քիմիայի – դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերը, համապատասխանաբար՝ 2.7, 1.2 – 1.0 տոկոսային կետերով:

2020 թվականին ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ բարելավվել է – արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 76.4%-ը:

6. 2020 թվականին դրամի միջին փոխարժեքը կազմել է 489.0 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա միջին փոխարժեքի (480.4) նկատմամբ արժեզրկվել է 1.8%-ով:

7. 2020 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 25.2%-ը՝ նախորդ տարվա 23.8%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 22.4%-ը՝ նախորդ տարվա 22.3%-ի դիմաց:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով 2020 թվականի արդյունքներով ծախսեր/ՀՆԱ ցուցանիշն աճել է 5.1 տոկոսային կետով – կազմել 30.6%: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 27%-ը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները՝ 3.7%-ը:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2020 թվականին կազմել է ՀՆԱ-ի 5.4%-ը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.4 տոկոսային կետով: 2020 թվականին ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 63.5% նախորդ տարվա համեմատ աճելով 13.6 տոկոսային կետով – հատելով հարկաբյուջետային կանոններով սահմանված 60% սահմանային շեմը:

ՀՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

8. ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով ծրագրվել էր ստանալ 1695.0 մլրդ. դրամ եկամուտներ, որից 1659.7 մլրդ. դրամը՝ ներքին աղբյուրների, 35.3 մլրդ. դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների հաշվին: 2020 թվականի պետական բյուջեի ցուցանիշներում ներառվել են նա– դրոշմանիշային վճարների գումարները (8.8 մլրդ դրամ), ինչպես նա– առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները – դրանց արդյունքում ձ–ավորված եկամուտները (671.5 մլն դրամ): Համավարակի ազդեցության հետ–անքների մեղմման նպատակով – հակաճգնաժամային միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ տարվա ընթացքում վերանայվել է բյուջեի պակասուրդի չափը՝ այն սահմանելով նախ ՀՆԱ-ի 5%-ի, իսկ այնուհետ– 7.4%-ի չափով: ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրը նվազեցվել է 131.9 մլրդ. դրամով (7.8%-ով) – կազմել 1563.1 մլրդ. դրամ, որից 1501.2 մլրդ. դրամը՝ ներքին աղբյուրների, 61.9 մլրդ. դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով:

2020 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 1560.7 մլրդ. դրամ – արձանագրվել է կառավարության կողմից ճշտված ծրագրի 99.8% կատարողական: Հարկային եկամուտների – պետական տուրքերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 100.3%-ով, իսկ տարեկան հաստատված ծրագիրը՝ 86.5%-ով: Այլ եկամուտների ճշտված ծրագիրը կատարվել է 101.6%-ով, պաշտոնական դրամաշնորհներինը՝ 85.9%-ով:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները 0.3%-ով կամ 4.8 մլրդ դրամով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը: Հարկային եկամուտները – պետական տուրքերը նվազել են 5.4%-ով (79.1 մլրդ դրամով), այլ եկամուտներն աճել են 37.7%-ով (33.4 մլրդ դրամով), իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 4.3 անգամ (40.8 մլրդ դրամով):

Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 25.2 տոկոս՝ նախորդ տարվա 23.8 տոկոսի դիմաց:

9. Պետական բյուջեի հարկային եկամուտները – պետական տուրքերը կազմել են շուրջ 1,385.2 մլրդ. դրամ կամ ճշտված ցուցանիշի 100.3%-ը: Հարկային եկամուտների – պետական տուրքերի հաշվին ապահովվել է ՀՀ պետական բյուջեի եկամուտների 88.8%-ը:

10. 2020 թվականին հարկային եկամուտների – պետական տուրքերի 34%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 471.6 մլրդ. դրամ: Նշված գումարից 283.8 մլրդ. դրամը ստացվել է ներմուծման հարկումից, 187.8 մլրդ. դրամը՝ ապրանքների – ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ նվազել է ներմուծումից գանձված ավելացված արժեքի հարկը 19.7%-ով, իսկ ներքին տնտեսությունից գանձվող ավելացված արժեքի հարկն աճել է 55.3%-ով: Ավելացված արժեքի հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն է գործել ներմուծման ծավալների անկումը:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 8.9%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 123.6 մլրդ դրամ: Մասնավորապես՝ Հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 61.2 մլրդ դրամ, իսկ Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 62.3 մլրդ դրամ: 2019 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 3.1%-ով կամ շուրջ 4 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի 8.3%-ով կամ 5.7 մլրդ դրամով կրճատմամբ:

2020 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների – պետական տուրքերի 10.7%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 148.8 մլրդ. դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի գծով մուտքերը նվազել են 17.9%-ով կամ 32.5 մլրդ դրամի չափով, որը հիմնականում պայմանավորված է շահութահարկի կանխավճարների գծով արտոնությունների տրամադրմամբ:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է շուրջ 411.5 մլրդ. դրամ եկամտային հարկ՝ ապահովելով հարկային եկամուտների – պետական տուրքերի 29.7%-ը: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի մուտքերն աճել են 0.1%-ով կամ 1.6 մլրդ դրամով:

2020 թվականին պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է 68.3 մլրդ. դրամ՝ ապահովելով հարկերի – տուրքերի 4.9%-ը: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերը նվազել են 28.3%-ով կամ շուրջ 26.9 մլրդ. դրամով, ինչը պայմանավորված է ինչպես Հայաստանի Հանրապետության՝ ԵՏՄ անդամ երկրներին համամասնորեն տրվող մաքսատուրքի գումարների, այնպես էլ երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող՝ մաքսատուրքով հարկվող ապրանքների ծավալների կրճատմամբ:

2020 թվականին շրջանառության հարկի գծով ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 26.6 մլրդ դրամ (կազմելով հարկային եկամուտների – պետական տուրքերի 1.9%-ը): Շրջանառության հարկի գծով –ս նախորդ տարվա համեմատ արձանագրվել է 8.3% կամ 2.4 մլրդ դրամի չափով կրճատում՝ հիմնականում պայմանավորված միկրոձեռնարկատիրության համակարգի ներդրմամբ:

2020 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 53.1 մլրդ. դրամ բնապահպանական հարկ – բնօգտագործման վճար՝ կազմելով հարկերի – տուրքերի 3.8%-ը:

Հաշվետու տարվա ընթացքում 24.8 մլրդ. դրամ են կազմել սոցիալական վճարները, 9.1 մլրդ դրամ՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները, 7.8 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները: Հաշվետու ժամանակահատվածում ճանապարհային հարկի գծով փաստացի մուտքերը կազմել են շուրջ 2.9 մլրդ դրամ:

11. 2020 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 33.4 մլրդ. դրամ պետական տուրքեր՝ կազմելով տարեկան ծրագրի 66%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի գծով մուտքերը նվազել են 27.1%-ով կամ շուրջ 12.4 մլրդ. դրամով:

12. 2020 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 53.2 մլրդ. դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 85.9 %-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել շուրջ 8.7 մլրդ. դրամ: Արձանագրված շեղումը գլխավորապես պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով:

13. 2020 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 122.2 մլրդ. դրամ այլ եկամուտներ, որը ծրագրով սահմանված ցուցանիշը գերազանցում է 1.6%-ով: 2019 թվականի համեմատ այլ եկամուտներն աճել են 37.7%-ով կամ 33.4 մլրդ դրամով:

ՀՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

14. ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով հաստատված ծախսերը կազմել են 1,855.7 մլրդ. դրամ, իսկ ճշտված ծրագիրը՝ շուրջ 1,989.0 մլրդ. դրամ:

Պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 1,894.6 մլրդ. դրամ, իսկ տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 95.3%-ով: Շեղումների ընդհանուր գումարի 56.4%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 43.6%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է պետական բյուջեի ծախսերի 97.5%-ը կամ 1,847.7 մլրդ. դրամը, որոնց գծով ծրագիրը կատարվել է 97%-ով: Բյուջեի ծախսերի 2.5%-ը կամ 47 մլրդ. դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է ծրագրի 56.1%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 16.3%-ով կամ 265.2 մլրդ. դրամով:

2020 թվականին, նախորդ տարվա համեմատ, ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցությունը կազմել է 30.6 տոկոս՝ 2019 թվականի 24.8 տոկոսի դիմաց:

15. ՀՀ 2020 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 1,668.5 մլրդ. դրամ: Հաշվետու տարում շուրջ 176.1 մլրդ. դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 99%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են ընդամենը 2%-ով:

16. 2020 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 226.2 մլրդ. դրամ կամ տարեկան ծրագրի 84.6%-ը: 2019 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշն աճել է 17.6%-ով, որը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճով:

ՀՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

17. ՀՀ 2020 թվականի պետական բյուջեն կատարվել է 334 մլրդ. պակասուրդով: 2019 թվականի համեմատ պակասուրդի մեծությունն աճել է 5.2 անգամ կամ 270 մլրդ. դրամով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2020 թվականին կազմել է 5.4 տոկոս՝ 2019 թվականի 1 տոկոսի դիմաց:

2019 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է նա– պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Ֆինանսավորման ներքին աղբյուրներին բաժին է ընկել պակասուրդի 359.4 մլրդ դրամը, իսկ արտաքին աղբյուրներին՝ 25.4 մլրդ դրամը:

Արտաքին վարկերի մարմանը հաշվետու տարում ուղղվել է շուրջ 103.1 մլրդ. դրամ:

19. 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 4,164.3 մլրդ. դրամ (7,968.5 մլն. ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 67.3-%: 2019 թվականի համեմատ այն աճել է 18.6%-ով (8.8%-ով): Պարտքի հիմնական մասը՝ 7,508.5 մլն. ԱՄՆ դոլարը կամ ՀՆԱ-ի 63.5%-ը ՀՀ կառավարության պարտքն է, իսկ 459.9 մլն. ԱՄՆ դոլարը կամ ՀՆԱ-ի 3.9%-ը՝ Կենտրոնական բանկի պարտքը:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը, նախորդ տարվա համեմատ, աճել է 652.2 մլրդ. դրամով կամ 647.2 մլն ԱՄՆ դոլարով: Արտաքին պարտքը կազմել է 6.053.1 մլն. ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա համեմատ աճել է 268.6 մլն. ԱՄՆ դոլարով կամ 4.6%-ով:

2020 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2019 թվականի 5016.2 մլն. ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 5184.2 մլն. ԱՄՆ դոլար: ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունն աճել է՝ 2019 թվականի 33.7%-ի դիմաց կազմելով 41.0%: Աճել է նա– ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2019 թվականի 88.9%-ից հասնելով 135.7%-ի:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱՉՅԱՆ

Կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան (Հեռ.՝ 011 513-603)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ գլխավոր մասնագետ Ա. Գալստյան (Հեռ.՝ 011 513-235)

12.05.2021թ.